ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 փետրվարի 2024թ. թիվ 113-Ա

Ն.ՎԵՐԱՆՅԱՆԻՆ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐԴՎՈՒ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ-Ի ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 2-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության վարչատնտեսական մասի համակարգողի նշանակման կարգը հաստատելու մասին» N 259-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 11-րդ կետով, հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Արդվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգողի պաշտոնի թափուր տեղը զբաղեցնելու համար դիմած հավակնորդի հետ պայմանագրի կնքման մասին 2024 թվականի փետրվարի 27-ի արձանագրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Նաիրա Մարտինի Վերանյանին նշանակել «ՀՀ Լոռու մարզի Արդվու հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով՝ 2024 թվականի մարտի 1-ից:

2. Ն.Վերանյանի վարձատրության չափը սահմանել համաձայն պայմանագրի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

29/02/2024

X

ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ

Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. փետրվարի 29
ք.Վանաձոր